ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ



ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ
(մոտ 410–490)

Մովսես խորենացին հայտնի է որպես Ոսկեդարի (5–րդ դար) մտավոր ու քաղաքական գործիչ, պատմահայր, թարգմանիչ, վարդապետ, ճգնավոր: Ծնվել է Տարոնի Խորնի կամ Խորոնք գյուղում: Աշակերտել է Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին: Իբրև գիտությունների նկատմամբ բուռն հետաքրքրություններ ունեցող բանիմաց պատանի՝ արժանավոր ուրիշ սաների հետ 430-ական թթ. ուղարկվել է հունական մշակույթի նշանավոր կենտրոն Ալեքսանդրիա:

Ուսումնառության տարիներին խորացրել է հունարենի իր իմացությունը, յուրացրել ոչ միայն ժամանակի հունալեզու քրիստոնեական մատենագրությունը, այլև անտիկ գիտության նվաճումները:

Մ. Խորենացու ձեռագրած «Հայոց պատմություն» մագաղաթյա մատյանը ազգային ինքնաճանաչման հավաստի փաստաթուղթ է սերունդների համար: Նա առաջին հայ պատմիչն է, որ փորձել է գրել Հայաստանի ամբողջական պատմությունը հնագույն ժամանակներից մինչև իր ապրած օրերը՝ դրանում ներառելով նաև առասպելները:

Նա մեծարվել է Պատմահայր, Քերթողահայր, Մեծն Մովսես, Տիեզերահռչակ, Սուրբ Մովսես Խորենացի պատվո անուններով:

Մ. Խորենացին քննադատում է մեր առաջին թագավորներին ու իշխաններին, որոնք ժամանակին հոգ չեն տարել՝ գրի առնելու ժողովրդի պատմությունը: Նա իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ բացատրում է, թե ինչու է ինքը ձեռնամուխ եղել այդ գործին. «Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորությունների կողմից

նվաճված, բայցևայնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան կատարված՝ գրելու և հիշատակելու արժանի»:

Քերթողահայրը պատմական իրադարձությունների չոր ու ցամաք շարադրող չէ: Նա ապրում է այդ ամենով, վշտանում կամ ոգևորվում է՝ նայած թե ում կամ ինչ պատմական դեպքերի մասին է գրում: Նա ունի իր նախընտրած պատմական հերոսները, որոնց մասին գրում է անկեղծ հիացմունքով ու հպարտությամբ, օրինակ՝ Վահագնը, Հայկը, Տիգրանը և ուրիշներ, որոնք նրա գրչի զորությամբ դարձել են հայ ժողովրդի լավագույն զավակները և պատմիչի հայրենասիրական ձգտումները մարմնավորող ազգային հերոսներ: